

ՂԱՐԱՐԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ ԻՐԱՆԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մի շարք հանգամանքների բերումով հայ բարբառները զգալի ազդեցություն են կրել իրանական լեզուներից: Իրանական տարրը ավելի առատ է արևելյան բարբառներում, քանի որ այլ հանգամանքներից զատ, այստեղ առկայանում է նաև սահմանակցային գործոնը: Ղարաբաղի բարբառում կարելի է առանձնացնել բազմաթիվ պարսկերեն բառեր, որոնք գործածական ու հաճախական են. արժու «պատիվ», գյուլ «վարդ», քախտ, քաղբանդ «կամարակապ շինություն», քէշտ «տաշտ», խուրդա «մանր», խուրագ «հաշ» և այլն: Խոսքը այստեղ այդ կարգի բառերի մասին չի լինելու:

Ղարաբաղի բարբառի քննությունը թույլ է տալիս տարբերակելու այնպիսի շերտ, որը հետաքրքրություն է ներկայացնում հայոց լեզվի պատմության, հատկապես լեզուների որոշ իրողությունների դրսևորման տեսանկյունից: Նկատի ունենք այնպիսի բառերը, որոնք հնչյունակազմով կամ իմաստով հարում են հին կամ միջին իրանական լեզուներին՝ կամ ենթարկվում են ուղադրավ ստուգաբանությունների:

Ներկայացնենք Ղարաբաղի բարբառում գործառուղ մի քանի իրանական այդ կարգի բառեր:

Թառ «մուգ կապույտ»: Հայերենի հիմնական գունանուններից՝ սեաւ, սպիտակ, կաւմիր, կապոյտ իրանական ծագում ունեն. իրանական փոխառություն է և քառ-ը, որի հետ պարթևերեն tar «մթաղույն»-ը ակնհայտ զուգահեռ է:

Կուգան «բորենանման մի կենդանի»: Բարբառային այս բառի գրական համապատասխանակն է գազան-ը՝ «վայրի գիշատիչ կենդանի» ընդհանրական իմաստով: Արմատական բառարանում գազան-ը ստուգաբանված չէ: Թեև ստուգաբանության պատմության մեջ որոշ փորձեր կան բառը իրանական համարելու, սակայն ըստ էության Աճառյանը դրանք մերժում է: Այժմ նոր տվյալներով հիմնավորվում է բառի իրանական բնույթը: Ենթադրվում է իրան. gaz «կծել, խալթել» արմատը: Հ. Բեյլիմը նկատում է, որ որոշ տեքստերում gז, gaz նշանակում է «գայլ», «վայրի կենդանի»²: Գազան-ի -ան- բաղադրիչը կարող է լինել հայկական, բայց բացառված չէ, որ այն իրան. ադ-դերբայակերտ ածանցն է: Այդ դեպքում բառը կարելի է ամբողջական փոխառություն համարել: Ուղադրվին այն է, որ բարբառային ձևը պահպանել է փոխառու լեզվում բառի ունեցած՝ կոնկրետ կենդանու իմաստի դրսևորումը, իսկ կէգան և ոչ թե գէգան ձևն էլ դարձյալ վկայում է բառի հնություն մասին, քանի որ Ղարաբաղի բարբառում խուլերի ձայնեղացումը համեմատաբար նոր երևույթ է:

Հարգակ «արձակ»: Հայ. արձակ-ը իրանական փոխառություն է: Ենթադրվում է իրան. harzak ձևը, որի հ-ն ընկել է հայերենում: Հ-ի առկայություն-

¹ Իրանական լեզուները բաժանվում են երեք փուլի՝ հին իրանական (մ. թ. ա. II հազարամյակ-մ. թ. ա. IV—III դդ.), միջին իրանական (մ. թ. ա. IV—III—մ. թ. VIII—IX դդ.), նոր իրանական (VIII—IX դդ. մինչև մեր օրերը): Իրանագիտության մեջ այս բաժանումը հենված է ավելի շատ պատմամշակութային, քան լեզվական փոփոխությունների վրա: Նկատենք, որ ժամանակագրորեն հայերենի և իրանական լեզուների դասակարգումները չեն համապատասխանում:

² S. Henning Memorial volum, London, 1970, p. 26:

նր իրանական լեզուներում հաստատվում է *ավեստ.* *haθaz*, *պրթ.* *hyrtz* «ար-
ձակել» նաև՝ իրանականից փոխառյալ անպահարգան բառում³:

Պարսերեն «պատուհան»։ Պատուման-ը ՀԱԲ-ում ստուգաբանված չէ։ Պատ և հանել բաղադրիչներով կազմության վարկածը, ըստ էության, ժողովրդական ստուգաբանություն է։ Ղաթաբադի և մի քանի այլ բարբառներում առկա համապատասխան ձևը հաստատում է բառի իրանական ծագումը՝ *patl-frana-ից*։ *Fran*-«փշել» բառացի «օղանցք»։ Որպես ձևային զուգահեռ է. *Բենվենիստը* նշում է *patl i ras*, որից ունենք պատուման⁴:

Fr > hr > h հնչյունափոխությունը հաստատվում է հայերենի իրանական փոխառությունների բազմաթիվ օրինակներով (հրաման, պահակ-պարհակ, հրովարտակ և այլն)։

Հրշտումի։ Գրական համապատասխանակը հրեշտակն է, որի իրանական ծագումը կասկած չի հարուցում. հմտ. *պրթ.* *frešta*, *ավեստ.* *īraē-a* «լրաբեր»⁵, *Ինչպես նկատելի է*, բարբառային ձևի երկրորդ *ր-ն* չկա ո՛չ գրական տարբերակում և ո՛չ էլ իրանական հայտնի ձևերում, ծթե *ր-ի* առկայությունը զուտ բարբառային երևույթ չէ, ապա ենթադրելի է իրանական համապատասխան ձևի գոյությունը, որը մեղ չի հասել, մանավանդ, որ իրանական լեզուներում առկայանում են այլ օրինակներ՝ *ր-ի* անկումով. հմտ. *իրան.* *tršna*, *ավեստ.* *taršna*, *պրս.* *tišna* «ծաքավ», *իրան.* *kršvar*-*ավեստ.* *karšvar*-*պրս.* *kišvar* «հրկիր»⁶, Բարբառային և գրաբարյան ձև-վերը դրսևորում են նաև իմաստային առանձնահատկություններ, ծթե գրաբարում այն «բարու» խորհրդանիշ է, ապա բարբառում՝ «շարի, շար ոգու»։ Ծթե այս վերջին իմաստը փոխառու լեզվից չի գալիս, ապա գործ ունենք իմաստների բեռնացման երևույթի հետ։

Աշխարա «բացահայտ»։ Բառը գրաբար մատենագրության մեջ առկա է Եղիշի որոշ ձևագրերում ու հրատարակություններում։ Քննական բնագրում այն ուղղված է աշտարակ⁷։ Ծթե *V դ.* բառի գոյությունը թեական է, ապա բարբառում նրա հնությունը կասկած չի հարուցում։

Հրաակաշ «կիսրար»։ Բարբառում հաճախական այս բառին ակնհայտ զուգահեռ է միջին իրանական լեզուների *haθakaš* «միասին ցանող»-ը, նիգյարան (լինել, մնալ) «կարոտել, մտածել, անհանգստանալ»։ Շատ գործածական բայ է բարբառում, ենթադրելի է ծագումնաբանական կապը *պրս.* *niger*, *nigeridan* «նայել», *խորհել*-ի հետ։ *Իրան.* *ni-karaya-ից*, որտեղ *kar* «գործ» արմատն է. հմտ. նաև *միջ. իրան.* *hangardan* «ենթադրել, համարել»։ Այդ արմատով հայերենում ունենք անգար համարել, մի քանի տեղ դնել, որը վկայված է Եղիշի մոտ. «Ծթ էլ յայն միտս ուխտաւորք էին, ապա և կուսութիւնն չէր յանգարի կուսութեան»⁸, իրանական նշված արմատով առկա է և *uz-kar* «մտածել, քննարկել», մի խոսքով, բառի իրանական բնույթը կասկած չի հարուցում։

Վաազ «շուտ, արագ»։ Գործածվում է արևելյան տարածքի բարբառներում։ Բառի արտաքին-հնչյունական տեսքը խոսում է իրանական ծագման օգտին։ Նկատենք, որ գրաբարում վ-ով սկսվող մի շարք բառեր իրանական փոխառություններ են՝ *vi* մասնիկով (վկայ, վկանդել, վհուկ, վճար, վճիռ, վնաս, վստահ, վտակ, վտանգ, վտաւակ)։ Ուրեմն, առանց փոխառու աղբյուրի զուգահեռի էլ կարելի է ենթադրել վաազ-ի իրանական ծագումը՝ համեմատու-թյան եզր ընդունելով վերը բերված բառաշարքը։ Մեզ թվում է այդպիսի

³ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, Երևան, 1971, էջ 226:

⁴ *Տես*՝ Bulletin de la Societe de Linguistique de Paris, Paris, 1957, p. 63:

⁵ Основы иранского языкознания (այսուհետև՝ ОИЯ), М., 1981, с. 187.

⁶ Նույն տեղում, էջ 104:

⁷ Եղիշի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 21:

⁸ Եղիշի Վոզրացույ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, էջ 287:

զուգահեռ է միջ. պրս. *virēz*, պարթ. *virēz* «փախչել»: Առարկություն կարող է լինել իրան. *e* հայ. *ա* համապատասխանության հարցում: Բայց հայերենի իրանական փոխառությունների մեջ այդպիսի տվյալներ կան. համտ. ձառաշարժվել—հայ. ճեմ(ել): *e*-ի երկար կամ կարճ լինելու հանգամանքն էլ այստեղ էական չէ, քանի որ նույն իրանական արմատից հայերենում ունենք կեշտ և քէշ «կրոն»: Հավանաբար վաղ-ի փոխառության բուն աղբյուրը պարթևերենը չէ, այլ իրանական որևէ բարբառ:

Տօշ «ուս, կուրծք»: Միշին պարսկերենում առկա է *dōš*: Բարբառում բառակազմի -տ-ի առկայությունը վկայում է, որ բառը հին փոխառություն է:

Այժմ անդրադառնանք նի մասնիկով բայակազմության հարցին: Ղարաբաղի բարբառում մի քանի տասնյակ բառեր կազմվում են այդ մասնիկով. նի մտնել «մտնել, ներս մտնել», նի կյալ «կպնել», նի քցիլ «ներս գցել» և այլն: Այս հարցին անդրադարձել են մի շարք հետազոտողներ: Նյութի ընդգրկման, դասակարգման ու որոշ մեկնաբանությունների տեսանկյունից, նշելի է հատկապես Ա. Պողոսյանի ծավալուն հոդվածը⁹:

Ոմանք նի մասնիկը բխցնում են *ներս-ներս* ձևերից, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է բայակազմությանը: Մեր կարծիքով, բայակազմության ժամանակ հանդես եկող նի-ն երկբնույթ է: Եթե նի բնկնել «ներս ընկնել», նի ծրծել «ծծել, ներս ծծել», նի աճել «ներս լցնել», նի բքցիլ «ներս գցել», նի մտնել «մտնել, ներս մտնել» նի պրծնել «ներս խցկվել» և նման այլ բառերի դեպքում, զոնն իմաստի տեսակետից, ենթադրելի է նի-ի ներս-ից առաջանալը, ապա ներքոգրյալ բառերի համար այդ աղբյուրը խիստ կասկածելի է: Նի թակել «թակել, ծծել», նի կցնել «վառել», նի կապել 1. «փաթաթել», 2. «խփել, հարվածել», 3. «շարտել», 4. «ուղղել մի կողմի վրա», նի պրանել «խփել», նի կյալ 1. «կպնել», 2. «հանդիպել», 3. «զարկել», 4. «խոսքը վերափոխական թվալ», նի կեճալ 1. «վառվել», 2. «բարկանալ», նի կօկել «հաբել, կոկել», նի շռել «աղնապիշ նայել» և այլն¹⁰:

Նի (ոյ-) մասնիկի այս գործառությունը բավական հաճախական էր հին և միջին իրանական լեզուներում: Այն ուներ բայակազմական և բառակազմական արժեք, որը և առկայանում է հայերենի իրանական բազմաթիվ փոխառություններում. նգար, նգով, նծար, նկան, նման, նշան, նպատակ, նպալ... Բերենք բայակազմության օրինակներ իրանական լեզուներից: Ավեստ. *marəz* «շոշափել», պարթ. *nimarz* «մաքրել»: Իրան. *vač/vaz* -պարթ. *nivaz* «մեղմ խոսել» (այս արմատից է ենթադրվում նաև հայ. նուաճեմ-ը)¹¹: Ընդհանուր իրանական հիմքով և ոյ մասնիկով միջին. պարսկերենում առկա են *nih-*, *nihādan* «դնել, տեղավորել», *nivistan* «հայտնել», *nibišta* «նիգմ» Այսպիսի օրինակներ շատ կան¹²: Նի մասնիկով բայակազմության բարբառային և իրանական լեզուների համապատասխանությունը ակնհայտ է, որը թույլ է տալիս եզրակացնելու, թե այն որպես հայ-իրանական ընդհանրություն գործել է Հայաստանի արևելյան տարածքում և իրանական սարահարթում կամ, որ ավելի հավանական է, այդ երևույթը պայմանավորված է իրանական լեզուների ազդեցությամբ: Բոլոր դեպքերում երևույթը հին է:

Նշենք մի քանի իրանական բառեր, որոնք տարբերակվում են ըստ փոխառության բուն սկզբնաղբյուրի: Մինչև մեր դարի 20-ական թվականները միջին իրանական փուլի լեզուներից գիտությունը բավարար չափով հայտնի էին միայն միջին պարսկերենի իրողությունները: Այժմ արդեն որոշակիորեն

⁹ Ա. Պողոսյան, Նի մասնիկը և նրա բառակազմական նշանակությունն ու իմաստային առումները հայերենի բարբառներում («Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 2, էջ 124—144):

¹⁰ Համապատասխան օրինակները տե՛ս նույն տեղում:

¹¹ Տե՛ս է՝ Աղայան, Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 80—81:

¹² Տե՛ս ОИЯ, с. 104.

բացահայտված են և պարթևերենի լեզվական համակարգի շատ ու շատ կողմեր: Առանձնացված են մի խումբ հատկանիշներ, որոնցով տարբերակվում են հյուսիս-արևմտյան՝ NO, (որի ներկայացուցիչն է պարթևերենը) և հարավ-արևմտյան՝ SO (ներկայացուցիչը միջին պարսկերենն է) լեզուների բառապաշարը¹³, Ըստ այդ հատկանիշների էլ կաբելի է առանձնացնել համապատասխան իրանական սկզբնաղբյուրից անցած զգալի բառաքանակ: Բերենք բարբառային մի քանի օրինակներ:

Բնթա «դռնակ»: Իրան, dV-պրթ. b-միշ. պրս. d օրինալափությունը հաշվի առնելով բարբառային ձևի համար ենթադրելի է NO աղբյուր: Եթե բարբառային ձևը փոխառված լինի նոր պարսկերենից, ապա վերջինս էլ փոխառել է պարթևերենից:

Տրծէր «դժվար»: Իրանական փոխառություն է: Դժար ձևը մեր կարծիքով բարբառային նորակազմություն է, այլ SO լեզուներից անցած ձև: Բանն այն է, որ NO-ի w (ւ)-ն երբեմն SO-ում բացակայում է. հմմտ. իրանականից փոխառյալ հաւստար և հաստարակ համանիշները կամ՝ պրթ. p w' g-միշ. պրս. pak «մաքուր»: Ուրեմն, պետք է կարծել, որ գրաբարյան դժուար ձևը NO-ից է, իսկ բարբառային դժար (տժար, տրծէր)՝ SO-ից:

Կուշտ/բուշտ «կողմ, մոտը»: Իրանական փոխառություն է, որի նույնարմատ հնչյունական տարբերակն է կոյս «կողմ» (ի դեպ, այս բառն էլ կա Ղաբարդի բարբառում՝ ընգյուս «այն կոյս»): NO-ի st-ն so-ում ներկայանում է st: Գրաբարում ավանդված բուստ «կողմ» բառը ակնհայտորեն միջին պարսկական ձև է, իսկ բարբառայինը ներկայացնում է NO լեզվախումբը:

Բարբառում կան իրանական ծագում ունեցող մի շարք բառեր, որոնք հետաքրքիր զուգահեռներ են ինչպես իրանական լեզուների, այնպես էլ գրաբարյան փոխառյալ համապատասխանակների նկատմամբ:

Բըշաէլ, բիշտի տալ «հրել, բշտել»: Որոշ բարբառներում առկայանում է մուշտ տարբերակով. հմմտ. մուշտի տալ: Մուշտ և բուշտ ձևերը գրաբարում անկախաբար վկայված չեն: ՀԱԲ-ում Աճառյանը այն իրավացիորեն կապում է իրան. must «բռնեց» բառի հետ: Բուշտ և մուշտ-ը, անշուշտ, նույն արմատի հնչյունական տարբերակներն են: Բ>մ հնչյունափոխության օրինակներ հայերենում կան: Դեռևս V դ. վկայված է սկիսմն (փխն.՝ սկիզբն). «Իսկ սկիսմն հարկ է լաւացն և ըղձագունացն բաշխել տալ»: «Զի ժամանակի ամենայնի սկիսմն և դարձեալ զարունն իցէ»¹⁴: Ունենք հաստաբեստ և հաստամեստ. «Որպէս զաշտարակ մի հաստաբեստ հզօր և անշարժ»¹⁵: «...Տեսանէր սպարապետի Մանուէլ ի մեծութենէ հասակին...ի հաստամեստ յանձն»¹⁶: Այդ հնչյունափոխությունը գործել է և իրանական լեզուներում. հմմտ. իրանականից փոխառյալ մաճուշակ և պրս. banāšā:

Բարբառային բըշաէլ-ի արմատը իրան. մուշտ/բուշտ «բռնեց» բառն է, որը մեր կարծիքով առկայանում է և գրաբարյան ըմբշամարտ(իկ) կազմության մեջ: Վերջինս, ի դեպ, ՀԱԲ-ում ստուգաբանված չէ: Իրանական արմատի առկայությունը ավելի ակնառու է դառնում ըմբշամարտ գրության դեպքում, որ վկայված է V դ.: Ուրեմն, ըմբշամարտ-ի նախնական և ստուգաբանորեն ճիշտ ձևը ընդ-բուշտ -ա-մարտ -ն է: Վերջինիս իմաստային ակնհայտ զուգահեռ է բռնամարտ-ը՝ վկայված V դ., այսինքն, բուշտ և բուտն համանիշներ են:

¹³ Տարբեր ուսումնասիրողների կողմից առաջադրված այդ հատկանիշները համարյա ամբողջությամբ ներկայացված են Գ. Ջահուկյանի Հայոց լեզվի պատմություն գրքում (Նոհան, 1987, էջ 491, 561—562):

¹⁴ ♦ Ի լ ո ն ի Մ ն ա ճ ո ղ դ ք ի հ ա յ ս, Վ ն ն ա ի կ, 1826, էջ 441, 444.

¹⁵ ♦ ս ք ա ս տ ո թ ի Բ ու շ ա ն դ ա ճ ա լ Պ ա տ մ ա թ ի ն հ ա յ ո ճ, Ե. Պ ե տ եր ուր դ, 1888, էջ 169.

¹⁶ Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 204: Կարելի է ենթադրել, որ հաստամեստի մեջ մեծ բաղադրիչը հայերենի Բ>մ հնչյունափոխության արգասիք է, այլ իրանական mast «հաստ» արմատը:

Հուշար (լինել) «հուզվել, տակնուվրա լինել, շփոթվել»։ Սրա գրական համապատասխանակը գրաբարյան յուզ-ն է՝ իրան. yoz, որի դերբայական yuš-էնը ներկայանում է բարբառներում։ Նման զուգահեռ ձևեր ալլ բառերի դեպքում հանդիպում ենք գրաբարի իրանական փոխառություններում։ Հմմտ. իրան. yāzəqən, որի դերբայական ձևն է yāz-։ Այս հիմքերով ունենք համապատասխանաբար յազեմ «զոհեմ» և յաշտ առնեմ «զոհեմ»։

Չափ (տալ, թողել) «երիվարը արագ քշել»։ Իրան. Շառ-արմատն է, որ առկայանում է գրաբարյան ցեպել, անապարել բառերում։ Շնչեղացումը իրանական լեզուներում ավելի նոր երևույթ է. այսինքն, չափ ձևը ուշ շրջանից կատարված փոխառություն է։ Որպես չափ-ի իրանական բնույթը հաստատող զուգահեռ կարելի է նշել պրս. c apari «սուրհանդակ» բառը։

Հազ- (անել) «սիրել, դուր գալ, հաճել»։ Հազ արմատի ձևի և իմաստի ակնհայտ զուգահեռ է գրաբարյան հաճ-ը՝ որից հաճել, հաճոյ, հաճություն, բազմահաճոյ, կամահաճոյ... և այլն։ Հաճ-ը իրանական փոխառություն է՝ իրանական լեզուներում, հատկապես միջին պարսկերենում, գործուն է եղել >Հ հնչյունափոխությունը՝ միջձայնավորային և հետձայնավորային դիրքերում։ Հաստատված է նաև, որ այդ >Հ անցումը կատարվել է սասանյան ժամանակաշրջանում (III—IV դդ.)։ >Հ անցման բազմաթիվ օրինակներ կարելի է նշել հայերենի տարբեր լեզվավիճակների ընձեռած տվյալներով։ Ունենք ունիկ (իրան. ուժ «օր») և բարբառային ռուզի «օրապահիկ», առանձին «արաղավազ»-բարբառային թազի «արագավազ շուն», վաճառ-բարբառային բազաուր և այլն։ Բարբառային հազ-ը հենց >Հ անցման դարձյալ մեկ նմուշ է։

Սազ (անել) «սարքել, հարմարացնել»... ներկայացնում է իրանական լեզուների վերը նշված հնչյունափոխությունը։ Իրան. sač արմատն է, որը անկասխաբար հայերենում վկայված է, բայց հանդիպում է պատշաճ փոխառյալ բառում (իրան. pati-sač—որտեղ ճ-ի ազդեցությամբ ս-ն վեր է ածվել շ-ի)։ Փոխազդեցական հնչյունափոխության նման կարգի մի օրինակ է և իրանական լեզուներից փոխառյալ նամիշտ-ը, որը սկզբնապես եղել է նազիշտ և զ-ն շ-ի ազդեցությամբ դարձել է ժ։

Բարբառային նյութի քննությունը մեծապես նպաստում է հայերենի իրանական փոխառությունների խոր և բազմակողմանի ուսումնասիրությանը։ Լեզվի պատմության հայեցակետից կարևորվում է հատկապես հին փոխառությունների վերհանումը։ Փաստերը թույլ են տալիս ենթադրելու, որ Ղարաբաղի բարբառում իրանական փոխառությունների գործընթացը համընկնում է ընդհանրապես հայերենի իրանական փոխառությունների գործընթացին, որը կողմնակի ապացույց է Արցախի տարածքում հայերենի վաղնջական գործածության մասին։ Իսկ որ այդ տարածքը հայախոս էր հայոց լեզվի կազմավորման շրջանից, հաստատվում է բարբառում հնդեվրոպական բազմաթիվ արմատների առկայությամբ (նաև այնպիսիների, որ գրաբարից չեն ավանդված), գրաբարյան հազարավոր բառերի ու քերականական ձևերի գոյությունը¹⁷։

¹⁷ Այդ մասին տե՛ս Լ. Հովհաննիսյան, Գրաբարի և Ղարաբաղի բարբառի առնչության հարցի շուրջը (Պատմա-բանասիրական հանդես, 1977, № 1, էջ 141—152), և ուլենի Բառային հնարանություններ Ղարաբաղի բարբառում (ՀՍՍՀ ԳԱ լրաբեր, 1979, № 9, էջ 52—60)։

О НЕКОТОРЫХ ИРАНСКИХ ЗАИМСТВОВАНИЯХ В КАРАБАХСКОМ ДИАЛЕКТЕ

Л. Ш. АВАНЕСЯН

Р е з ю м е

В карабахском диалекте имеется ряд заимствований из средне-иранских языков. Об этом свидетельствуют словоформы, смысловые оттенки, параллели иранских заимствований в грабаре: հարգակ «просторный», պըտըրհան «окно», նիգլարան «тоска» и т. д.

Особый интерес представляют конструкции с частицей ni: նի ընկնել «войти», նի կապել-1. «завернуть», «ударить», 2. նի կըցընել «сжечь»...

Наличие подобного рода материала позволяет предположить два источника происхождения частицы ni: 1. от армянского ներքս-ներս и 2. от среднеиранского ni с глаголообразовательным и словообразовательным значением.

ON SOME IRANIAN BORROWINGS IN KARABAKH DIALECT

L. Sh. HOVHANNISIAN

S u m m a r y

In Karabakh dialect there is a number of borrowings from middle-iranian languages. Wordforms, meaning shades, parallels of Iranian borrowings in grabar հարգակ «spacious», պըտըրհան «window», նիգլարան «melancholy», etc., testify about it.

Constructions with particle ni represent a special interest: նի ընկնել «enter», նի կապել-1) «to wrap up», 2) «to hit», նի կըցընել «to burn».

The presence of this kind of material permits to assume two sources of origin of particle ni: 1) from Armenian ներքս-ներս and 2) from middle-iranian ni with verbforming and wordforming meaning.